# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀՐԵԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Երկուշաբթի, մայիսի 2-ին, Երուսաղեմի հրեական համալսարանում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության ոգեկոչման հուշ-երեկո, որի առաջին նիստը սկսվեց հայագիտական ամբիոնի տնօրեն պրոֆ. Մայքլ Սթոունի բացման խոսքով, որին հաջորդեցին եբրայերեն և հայերեն ընթերցումներ Եզեկիել մարգարեի 37-րդ գլխից: Ապա ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նահատակների հիշատակը, որին հաջորդեց Երուսաղեմի հայոց Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի և համալսարանի հումանիտար առարկաների ֆակուլտետի տնօրեն պրոֆ. Ստիվան Կապլանի ողջույնի խոսքերը:

Այնուհետև երաժշտական կատարումներով հանդես եկան Գուսան վարդապետ Ալճանյանը, Աշոտ Սահակյանը, Նուբար Ասլանյանը՝ իր ընտանիքի հետ միասին:

Հուշ-երեկոյի երկրորդ նիստին նախ ելույթ ունեցան դոկտոր Սերժիո Լափոոտան և պրոֆ. Յոավ Լոեֆը: Ելույթ ունեցավ նաև ցեղասպանագետ և մեծ հայասեր պրոֆ. Իսրայել Չարնին: Հարգելի բանախոսն իր ելույթում խոսեց Թուրքիայի ուրացման քաղաքականության մասին և իր միտքը շարունակելով նշեց. «... մենք արդեն իրական հաղթանակի ճանապարհին ենք: Հակառակ Թուրքիայի բանեցրած ճնշումներին, այսօր Թուրքիայում օրեցօր ավելանում է այն թուրք գրականագետների և դիվանագետների թիվը, որոնք ընդունում են Հայոց ցեղասպանության անհերքելի իրողությունը: Ընդ որում այն դեպքում, երբ նման քայլն այսօր Թուրքիայում որակվում է իբրև դավաճանություն և հետապնդվում քրեորեն:

Հուշ-երեկոյին մասնակցում էին ավելի քան 100 հայ և օտար ակադեմիականներ, ուսանողներ և անհատներ: Հուշ-երեկոն դրական արձագանք ունեցավ մասնակիցների շրջանում: Հուշ-երեկոյին անդրադարձել է նաև տեղական թերթերից «The Jerusalem Post» պարբերականը:

**Ըստ «Սիոն» ամսագրի Դ–Զ, 2005 թ., էջ 194-198**